

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

110

ՀՀ ՍՓՅՈՒՌԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Խմբագրական

Մանկտ Պետերբուրգում քննարկվել են հայությանը հուզող կարևորագույն խնդիրներ

Հայ կինը՝ գենի պահապան

Սփյուռքի թղթակիցներ

Գլենդեյլի տասնամյա Ալբերտ Բայանը՝ Հերիաթների աշխարհում մանկական եկարի համահայկական մրցույթ-փառատոնի հաղթող

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՅԻՆԵՐԻ ՄԵՏԱՐՈՒՄ

Կոչ Թիլիսաբնակ իմ հայրենակիցներին

Հարույր Սասունյան. Ձեմայ փաշայի թոռն ասաց Ցեղասպանություն, իսկ Մորգենթաուի ծոթը՝ ոչ

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՐԱՐԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԱԽԱՂԵՊ Է ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ 1915-1923 թթ. ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վերատպություններ

ՓՐԿԵԼ ԱՐԵՎԱՏԱՀԱՅԵՐԵԼԸ՝ ՄԵԼԳՈՒՑԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱԲ

Խմբագրական



Մանկտ Պետերբուրգում քննարկվել են հայությանը հուզող կարևորագույն խնդիրներ

2011-04-09

Հավաքի աշխատանքները մեկնարկեցին Մանկտ-Պետերբուրգի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր առաջնորդ հայր սուրբ Նշան Մարտիրոսյանի օրհնությամբ եւ համայնքների ղեկավարների ներկայացուցիչների լայն մասնակցությամբ: Սփյուռքի նախարարության պատվիրակությունը հանգամանորեն ներկայացրեց հայ համայնքների ձևավորման, աշխարհագրության, սփյուռքյան կառույցների հետ համագործակցության անցյալը եւ ներկա: Հավաքի մասնակիցները տեղեկացվեցին նաեւ ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծմանը, երկամյա գործունեությանը, գերակա ուղղություններին, իրականացրած եւ առաջիկա ծրագրերին, Հայրենիք-Սփյուռք գործակցությանը, համահայկական ծրագրերի իրականացմանը եւ ձեռքբերումներին առնչվող բազում

հիմնախնդիրներին: Ներկայացվեցին նաեւ ԱՊՀ հայ համայնքների առանձնահատկությունները եւ դրանից բխող թիրախային միջոցառումների ծրագիրը, որի իրականացումը մեծապես կնպաստի ԱՊՀ երկրներում հայ համայնքների հետ կատարվող աշխատանքների համակարգմանը եւ դրանց արդյունավետության բարձրացմանը:

«Համայնքների ներկայացուցիչները հավաքի ընթացքում բարձրացրին լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ ուսումնական գրականություն, հայագիտական ուսումնասիրություններ եւ այլ ձեռնարկներ ստանալու վերաբերյալ: Նշեցին նաեւ սփյուռքի համար հասանելի տիրույթում հեռարձակվող հեռուստահաղորդաշարերի հայապահպանությանը չնպաստող բովանդակության ու որակի հետ կապված խնդիրներ: Ընդգծեցին բնակչության երկրում այլ ազգային փոքրամասնությունների հետ համագործակցության եւ նրանց հայկական համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակից դարձնելու կարևորությունը, ինչպես նաեւ կիրակնօրյա դպրոցների գործունեության ամրապնդումը, քանի որ հայերենը հետզհետե դադարում է լինել հաղորդակցության միջոց», -տեղեկացրեց ՀՀ սփյուռքի նախարարության ԱՊՀ երկրների վարչության պետ Անդրանիկ Արշակյանը:

Նրա խոսքով, հավաքի մասնակիցները հատուկ ուշադրություն են հրավիրել նաեւ ՀՀ զինված ուժերում ծառայության հետ կապված սփյուռքահայ գորակոչային տարիքի երիտասարդների զինապարտության, տարեկետման, այլընտրանքային ծառայության, ծառայությունից ազատման հետ կապված հարցերի, ինչպես նաեւ Հայրենադարձության մասին օրենքի նախագծի եւ հայեցակարգի դրույթների հստակեցման, սփյուռքահայ գործարարների կողմից Հայաստանում ներդրումների դեպքում առաջացող խոչընդոտների հաղթահարման վրա:

Առավել շեշտվել է հայապահպանության հարցում Հայ Առաքելական Եկեղեցու՝ ամենակտիվ եւ արդյունավետ գործող օղակի դերակատարության առավել ընդլայնման ու խորացման կարևորությունը եւ մատնանշվել փոքրաթիվ համայնքներում հայկական եկեղեցու բացակայության պարագայում փոքր մատուռների կառուցման անհրաժեշտությունը:

«Պակաս անհանգստացնող չէ նաեւ Հայաստան - ԱՊՀ երկրներ - եւ հետադարձ ուղղություններով ավիատոմների անբացատրելի թանկ գների հարցը, որ կրկին ներկայացրեցին սփյուռքի մեր հայրենակիցները, շեշտելով, որ հակառակ պարագայում հայրենիքի հետ կապը շատերի համար ուղղակիորեն դառնում է անհնար : Նույնքան կարևոր համարվեց նաեւ Հայաստանում ՌԴ միգրացիոն ծառայությունների գործունեությանը հետեւելը, քանի որ ՀՀ հարյուրավոր քաղաքացիներ մշտական բնակության են մեկնում Ռուսաստան, սակայն որոշ ժամանակ անց հուսախաբված ստիպված են լինում վերադառնալ Հայաստան, ուր վաճառել են բնակարանն ու ունեցվածքը», -փաստեց Անդրանիկ Արշակյանը:

Նա նաեւ վստահեցրեց, որ բարձրացված բոլոր հարցերը լրջագույն քննարկվել են. «Եղան կառուցողական բազմաթիվ առաջարկներ եւ տրվեցին սպառիչ պատասխաններ ու պարզաբանումներ, եղան նաեւ լրացուցիչ ուսումնասիրություններ պահանջող հարցեր: Հանդիպման վերջում համայնքների ղեկավարներին եւ համայնքային կառույցների ներկայացուցիչներին մեր կողմից նվիրած հայագիտական գրականությունը, մեր Մեծերի մասին նյութերը, խտասալիկները, այլոսները եւ խորհրդանիշների փաթեթը ընդունվեց անթաքսյց գոհունակությամբ եւ շնորհակալությամբ: Բացի այդ հանդիպման մասնակիցները գոհունակությամբ ընդգծեցին հավաք-հանդիպման կազմակերպական բարձր մակարդակի աշխատանքների արդյունավետությունը»:

Հայ կինը՝ գենի պահապան

2011-04-08



«Հայ կնոջ ֆեմինները դեռևս լիակատար ուսումնասիրված չէ, մինչդեռ հայ կինը հայոց գենի պահապանն է: Իսկ հայության մեծ մասն ապրում է անեզր սփյուռքում, ինչը վտանգում է հայ գենը, մշակույթն ու հայոց լեզուն: Եւ գլոբալիզացիայի ուղին բռնած աշխարհում հայ կնոջ դերն առավել կարևորվում է որպես կամուրջ իրենց երեխաների եւ Հայաստանի միջև: Երիտասարդներին հայ պահելը հայ կնոջ ձեռքում է: Դրա համար էլ կարևոր է նաեւ համախմբել սփյուռքյան կանանց հասարակական կազմակերպությունները», - ասաց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը՝ ողջունելով եւ շնորհավորելով ներկա կանանց:

Այնուհետ ներկայացվեցին «Հայրենադարձությունը եւ հայ կինը», «Կինը ավանդական եւ արդի հասարակության մեջ Հայաստանում եւ Սփյուռքում» թեմաներով զեկույցները:

Պատմական գիտությունների թեկնածու Արմենուհի Ստեփանյանը, ներկայացնելով հայ կնոջ ընդգծված արդյունավետ գործունեությունը Մեծ հայրենադարձության տարիներին, նշեց պատմությունից դասեր քաղելու եւ մեր օրերում առկա խնդիրների լուծումները գտնելու կարևորությունը:

«Հայ կինն առաջնային կարևորության խնդիր է համարում ոչ թե սեփական անձն ու աճը, այլ ողջ ընտանիքի առողջ առաջընթացն ու հայեցի դաստիարակությունը: Չնայած դրան, հայ կինը կարողանում է կարևոր դերակատարություն ստանձնել հասարակական կյանքում», - իր զեկույցում մատնանշեց պատմական գիտությունների թեկնածու Սվետլանա Պողոսյանը: Մերօրյա խնդիրներից քննարկման ընթացքում առանձնացվեց խառն ամուսնությունների աճի միտումը, ինչի առնչությամբ ՀԲԸՄ երիտասարդական ծրագրերի պատասխանատու Հերմինե Դյուժյանը պատմեց սեփական փորձի մասին. «Որպես սփյուռքում ապրող հայ ընտանիքի մայր՝ մշտապես գիտեցել եմ հայեցի դաստիարակության կարևորությունը եւ փորձել եմ մշտապես հետևել զավակներին հայերեն

խոսքին, հայեցի մտածողությանն ու տեղակայությունը Հայաստանի մասին: Չնայած դրան, տղաս գերմանուհու հետ ընտանիք կազմեց, բայց իր զավակին՝ թոռանս, կոչեց Մինասս:

«Խառն ամուսնություններն անգամ այնպիսի ամուր համայնքներում, ինչպիսիք Լիբանանի եւ Սիրիայի հայ համայնքներն են, դարձել են լուծում պահանջող խնդիր, քանի որ դրանց աճի միտում է նկատվում: Հարաբերություններն ազգերի միջև շատ ավելի սերտ են դարձել, և, բացի դա, կա ևս մի պատճառ. հայ աղջիկները մտավախություն ունեն տղաների քիչ լինելու պատճառով միայնակ մնալու և չեն կարևորում իրենց ընտրյալի ազգային պատկանելությունը»,- բարձրաձայնեց պատմաբան Գևորգ Յազարյանը:

Կլոր սեղան-քննարկմանը ներկա էին նաև ԵՊՀ մփյուռքագիտության ամբիոնի վարիչ Յուրա Ավետիսյանը, ՀՀ ազգային արխիվի տնօրեն Ամաստունի Վիրաբյանը, ՀՀ ազգային արխիվի փոխտնօրեն Էդգար Հովհաննիսյանը, ԳԱԱ Պատմության ինստիտուտից՝ պ.գ.դ. Էդուարդ Մելքոնյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան պ.գ.դ., Էդիկ Մինասյանը, ՀՀ մփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական ծրագրերի բաժնի պետ Սիրվադղ Համբարյանը, Համազգային հայ կրթական, մշակութային միության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Լիլիթ Գալստյանը եւ այլք:

Մփյուռքի թղթակիցներ



Գլենդելի տասնամյա Ալբերտ Բայանը՝ Հեքիաթների աշխարհում՝ մանկական նկարի համահայկական մրցույթ-փառատոնի հաղթող

2011-04-09

Մրցույթին Աթանյան արվեստի կենտրոնի սաները մոտեցան լրջորեն եւ մեծ աշխատանք կատարեցին իրենց նկարած հեքիաթների ձևավորման յուրովի եւ ինքնատիպ լուծումներ գտնելու համար: Ալբերտի Մի կաթիլ մեղրը՝ դրանցից լավագույնների մեջ էր: Մրցույթ-փառատոնի երկրորդ փուլի ավարտից հետո պարզ դարձավ, որ Աթանյան արվեստի կենտրոնի սաներ Մոնիկա Համբարձումյանի եւ Դավիթ Պիրիջանյանի նկարներն արժանացել են խրախուսական մրցանակի, իսկ Ալբերտ Բայանը դարձել է մրցույթի հաղթող:

Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության հրավերով մարտի 21-26-ը Ալբերտը գտնվում էր Հայաստանում՝ մասնակցելու հաղթողների համար կազմակերպված հետաքրքիր ու բազմաբովանդակ միջոցառումներին, ինչպես նաև պարգևների հանձնման արարողությանը:

Այս տարի ապրիլի 20-ին Երևանում՝ Գեղագիտության ազգային կենտրոնում կբացվի Աթանյան արվեստ 26- կենտրոնի 96 սաների նկարների ցուցահանդեսը՝ Ես սիրում եմ Հայաստանը՝ խորագրով: Սա Գլենդելի Աթանյան արվեստի կենտրոնի եւ Երևանի Գեղագիտության ազգային կենտրոնի համատեղ նախագիծն է, որին պատրաստվում էին 2010 թ. սեպտեմբերից: Նույն ցուցահանդեսը կբացվի ամռանը Լոս Անջելեսում: Այս առիթով Աթանյան արվեստի կենտրոնը հրատարակել է գունազարդ լաբու, որի մեջ գետեղված են բոլոր մասնակիցների ստեղծագործությունները: Այս տարի նույնպես Աթանյան արվեստի կենտրոնի աշակերտները տարբեր մրցույթներում արձանագրեցին նոր հաջողություններ, արժանացան բարձրագույն պարգևների: Դրանց թվում է Ստեֆանի Գրիգորյանի կոմպոզիցիան, որը հարյուրավոր պատանեկան ստեղծագործություններից ընտրվել է տեղադրվել է բազմահազար տպաքանակ ունեցող «Sax Art» կատալոգի շապիկին: Ստեֆանի Ես սիրում եմ կապիկներին աշխատանքը նախապես արժանացել էր «Sacura of America»

յուղակավճանկարների մրցույթի մրցանակին, որից հետո «Sax Art»-ը ընտրել էր այդ գործն իր կատալոգի շապիկին տեղադրելու համար:

Գլենդելի քաղաքապետարանի Արվեստի եւ մշակույթի բաժնի Մաքուր պահենք Գլենդելը՝ տարեկան մրցույթի 2011 թ. ֆինալիստներ դարձան կենտրոնի սաներ Առնելյա Քալանթարյանը եւ Տանիա Ռոստամյան, իսկ Աթանյան արվեստի կենտրոնն արժանացավ հատուկ մրցանակի:

Փետրվարի 5-ից մարտի 20-ը Աթանյան արվեստի կենտրոնի աշակերտներ Արփի Գիրկոյանի, Ալիսա Մանուկյանի, Լուսին Ենգիբարյանի, Նինել Աբրահամյանի, Անի Գիրվանյանի, Սարահ Ալաջաջյանի եւ Ստեֆանի Գրիգորյանի ստեղծագործությունները ցուցադրվեցին Օլյանդի Մանկական արվեստի թանգարանում՝ («Museum of Children's Art»): Այս գործերն ընտրվել էին 150 ֆինալիստների մեջ պատանեկան նկարչական մրցույթին մասնակցած չորս հազարից ավելի ստեղծագործություններից Ամերիկայից եւ Կանադայից:

Աթանյան արվեստի կենտրոնը վստահորեն պահպանում է առաջատարի դերը մանկա-պատանեկան արվեստի ուսուցման, զարգացման եւ պրոպագանդան գործում՝ հետեւողականորեն եւ նվիրումով կյանքի կոչելով իր առաքելությունը:

Կարինե Աֆրիկյան Գլենդել



ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՅԻՆԵՐԻ ՄԵԾԱՐՈՒՄ

2011-04-08

Նոր Զուղայի Բարեկամներ Յանձնախումբը (ՆԶԲ) Գլենդելում ժամանակին կեանքի էր կոչել Նոր Զուղայի Հայոց Դպրոցների Յոթելեանների Ենթայանձնախումբ (ՆԶՀԳԵ) յոթելեանական միասնական հանդիսությունում նշելու տեղի հայոց դպրոցների: Կենտրոնական Դպրոցի 130, Սբ. Կատարինեան Դպրոցի 110 և Գևորգ Քանանեան Դպրոցի 105 ամեակները: Եւ ահա 2011 թ. մարտի 11ի երեկոյան, Գլենդելի Սբ. Աստուածածին Եկեղեցու Արմենակ Տեր-Պետրոսեան սրահում, տեղի է ունենում մեծարման երեկոյ, նուփրուած յիշեալ դպրոցներում պաշտօնավարած, այժմ Լոս Անջելեսում բնակուող, ուսուցիչ-ուսիներին: Ներկայ են շուրջ 70 ուսուցիչ-ուսիներ, յաւելած նրանց հիւրերը: Բազմամարդ սրահը զարդարուած է դպրոցների նկարներով ձևաորուած գեղեցիկ պատասառով, օրուայ նշանաբանով՝ Մեր Դպրոցը մի սուրբ

տաճար՝ վերտառութեամբ. սեղանները զարդարուած են ծաղիկներով, Սբ. Մեսրոպ Մաշտոցի և այլոքների գեղեցկօրեն պատկերասպուած ծաղկամաններում, բոլորը պատրաստուած գեղարուեստական ձևաորող, նոյն դպրոցների ժամանակի աշակերտ, Վարդգէս Զոհրաբեանի ձեռամբ: Մեղանները ճոխացուած են Նոր Զուղայի աւանդական քաղցրաւենիքներով, թխուածքներով: Սրահում

տիրում է բարձր տրամադրություն, մտերմիկ մթնոլորտ: Ծննդավայրի յիշողությունն ու կարօտը ծփում է տարածության մեջ, արտացոլում ղեկերին. հնչում է խոսակցություններում:

Աւելի քան 410 տարիների պատմությամբ Նոր Ջուղան բոլորի սրտերում է... Ու փռում է մնում հինաուրց Սպահան քաղաքի հարաւում, Չայանդերուղ Գետի ձախ ափին, ամառների շոգով, մարմանդ ու գով, ծաղկաբոյր գարուններով, գունագարդ շէկիկ աշուններով ու ցրտաշունչ ձմեռներով... Սբ. Ամենափրկչեան Վանքի հովանու տակ, վաղ առաւօտեան աղջամուղջին, և երեկոյեան մթնշաղին, հնչում էին... Դեռևս հնչում են տասներկու եկեղեցիների զանգերը: Թէև վանքի բարձր աշտարակի չորսերեսանի հինաուրց ժամացոյցը իրաքանչիւր ժամի ղոզանջում է տուեալ ժամը, բայց մարդիկ ժամադրուելիս ասում են. Երեկոյեան զանգերին, նոյնիսկ պարսիկներն էլ այդպէս են ժամադրում. հայոց եկեղեցիների զանգերի աւանդոյթն է սովորեցրել Նոր Ջուղայի բնակիչներին:

ՆՋԲՅ նախագահ Պր. Վահագն Աբգարեանը ներածական խօսքով մեկնարկում է երեկոն. ինքն էլ յիշեալ դպրոցների շրջանաւարտ, հակիրճ անդրադառնում է նրանց հիմնադրման պատմականին, նրանց ունեցած դարաւոր դերին սերունդների հայեցի դաստիարակութեան գործում: Հրաւիրում է նոյն դպրոցների այսօրուայ երեջ սերնդից բանաստեղծ Գրիշ Դաւթեանին երկու խօսք ասելու: Գ. Դաւթեանը պատմում է դպրոցական կեանքի ջերմութեան մասին, որ մնում է բոլորի սրտում փաղաքուշ սերտութեամբ. նա պատմում է այն խաղերի մասին, որ պատանեկան առօրեայութեամբ խաղում էին դպրոցի բակում... Յիշում է երեսուն երկու խաղատեսակների անուններ, որոնցով զբաղուել ու խանդավառուել են սերունդներ: Այն օրերի հեռուստացուցագուրկ, նոյնիսկ ձայնագրագուրկ և ռադիոյագուրկ ժամանակներում... Այս օրերի մակարդակով էլ դատելով, խաղերի բազմազանութիւնը հասարակական և ընկերային զարգացման ինչոր ցուցանշային արժէք ունի, եզրակացնում է նա, կարողում է Մեր դպրոցը խորագրով իր բանաստեղծութիւնը, նուիրած ժամանակի իր ուսուցիչ Վաղարշակ Տէր-Սուքիասեանի յիշատակին:

Երեկոյի հանդիսավարութիւնը ստանձնում է ՆՋԲՅԵ նախագահ Տլ. Էլիզաբէթ Սուքիասեանը. նա նորջուղայեցի հին ու ճանաչուած ընտանիքի գաւակ է, որ Նոր Ջուղայում է աւարտել մեր դպրոցը՝ աւարտել է Սպահանի Համալսարանի հայերենագիտական բաժինը, տարիներ պաշտօնավարել է որպէս ուսուցիչ, ապա տնօրէն Քանանեան Մանկապարտէզի: Նա ողջունում է հանդիսականներին, ներկայ ուսուցիչ-ուսիչներին. ապա բեմ է հրաւիրում երեջ սերնդի տարիների վաստակաւոր ուսուցչուհի Օր. Սիրիկ Բագիլին, վաստակաւոր ուսուցչուհի և տնօրէն Սոնիկ Կիրակոսեանին, վաստակաւոր ուսուցիչ և տնօրէն Պր. Մասիս Տէր-Մարտիրոսեանին, բանաստեղծ և նախկին ուսուցիչ Գրիշ Դաւթեանին: ՆՋԲՅ նախագահը և անդամները Մեր Դպրոցը մի տուրբ տաճար՝ շքանշանով պարգևատրում են նրանց: Ապա վաստակի տարիների հերթականութեամբ բեմ են հրաւիրում բոլոր ուսուցիչ-ուսիչները, և պարգևատրում են նոյն շքանշանով. բոլորին յանձնում է շքանշանի հաստատագիրը: Տլ. Արաքս Անթանեսեանը երգերով և դաշնամուրի նուագակցութեամբ Պր. Սիմոն Սիմոնեանի, իսկ Տլ. Ժաքլին Թովմասեանը ասումներով, ճոխացնում են հանդէպը:

Ուսուցիչ-ուսիչները հրաւիրում են յուշեր պատմելու. որ ոգևորութեամբ է ընդունում. պատմումները ընկերակցում են ուրախութեան ծիծաղներով ու ծափերով ներկաների կողմից: Հանդիսականները հիւրաւիրում են խմիչքներով, համադամ ուտելիքներով: ՆՋԲՅԵ անդամներն են Էլիզաբէթ Սուքիասեան՝ նախագահ, Լիդա Այդինեան՝ քարտուղար, Գրիշ Դաւթեան, Վահագն Աբգարեան, Սիրիկ Բագիլ, Վարդգէ Զոհրաբեան, Էմմա Սահակեան, Վալերիկ Կարապետեան, Բիթա Մելիքեան, Ռուզան Ալչուջեան, Նազիկ Սիմոնեան, Լիդա Խաչատրեան, Էլիզ Այուազեան, Արլեն Համբարչեան: Աւարտին ՆՋԲՅ անդամ արժանապատիւ Տէր Կոմիտաս Քի. Թորոսեանը գնահատում է մեծարուածներին, հանդիսութիւնը կազմակերպողներին. մասնաւորաբար շնորհակալութիւն է յայտնում բարերար Տլ. Ալիս Նաւասարգեանին, որ կատարել է 5,000 Դոլլարի նուիրատութիւն, ժամանակին նա էլ ուսանել և աւարտել է Սպահանի Համալսարանի հայերենագիտական բաժինը, ապրելով Նոր Ջուղայում: Յորելեանական հասարակական հանդէպ տեղի կունենայ մօտապայում, երբ կստացուի դպրոցների հիմնադրութեան և գործունէութեան մասին պատրաստուած շարժանկարը Նոր Ջուղայից:

**ՍՈՒՎ ԳՆԻԹԵԱԼ
Գլենդէ, Կալիֆորնիա**



Կոչ Թրիլիսիայի հայրենակիցներին

2011-04-08

Քան տարի առաջ 1991 թվականին, Թրիլիսիի ծայրամասերից մեկում, որը ժողովրդի մեջ «Աֆրիկա» է կոչվել այն պատճառով, որ քաղաքի կենտրոնից բավականին հեռու է գտնվում, տեղի մեծաքանակ հայ բնակիչների խնդրանքով և մի քանի հայրենասեր, ազգասեր ու հայասեր անձանց այդ թաղամասում բնակվող (այժմ՝ արդեն վախճանված) Երջանիկ Ղանդիլյանի, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Վրաստան» թերթի խմբագիր՝ Վան Բայրոյթյանի, թիվ 131 ռուսական դպրոցի տնօրեն (այժմ՝ արդեն վախճանված) Գիվի Մեփիսաշվիլու եւ նույն դպրոցի առաջին հայ ուսուցչուհու՝ Ռուզաննա Հովակիմյանի համատ ջանքերով Վրաստանի առաջին նախագահ (այժմ՝ արդեն վախճանված) Զվիադ Գամսախուրդիայի օրոք և նրա անմիջական միջամտությամբ Թրիլիսիի ռուսական թիվ 131 դպրոցին կից 25 աշակերտով

բացվեց հայկական առաջին դասարանը:

Տեղի հայ բնակչությունն անչափ ուրախացել էր, որ այսուհետ իրենց զավակները պիտի կրթություն ստանան մայրենի լեզվով՝ հայերենով, ու տարեցտարի աճում էր մեր հայկական բաժինը՝ հասնելով մոտ 200 աշակերտի: Աշակերտների հետ մեկտեղ՝ աճում էր նաև հայկական բաժնում դասավանդող հայ ուսուցիչների թիվը, որտեղ գրեթե բոլորն էլ իրենց գործի արհեստավարժ մասնագետներ էին: Այդ ընթացքում՝ դպրոցը տվել է հայ բաժնի շրջանավարտների մի քանի սերունդ, որոնցից շատերն իրենց ուսումը շարունակել են Վրաստանի, Հայաստանի կամ Ռուսաստանի բուհերում:

Ուսման առաջադեմ մեր սաներն արժանացել են Վրաստանի այժմյան նախագահի սահմանած պարգևներին՝ ստացել ոսկե, արծաթե մեդալ, համակարգիչ: Մեր դպրոցականներն ու մանկավարժները ակտիվորեն են մասնակցել գրեթե բոլոր այն կրթա-մշակութային միջոցառումներին, որոնք անց են կացվել Թրիլիսիում եւ Երևանում, ինչպես օրինակ՝ Թրիլիսիի ամենամյա «Գարունը գարնան մեջ» փառատոնը, Երևանում անկացված «Համահայկական խաղեր», «Մեկ ազգ, մեկ մշակույթ», «Հայոց լեզվի և հայագիտական առարկաների համահայկական օլիմպիադա», «Արի տուն», Երևանում եւ Էջմիածնում՝ «Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում», Քուլթաբի քաղաքում՝ Վրաստանի հայ ուսուցիչների վերապատրաստում, Ծաղկաձորում եւ Ղարաբաղում՝ կրթական եւ լրագրական դոկորդի խորհրդաժողովներ եւ այլն: 2003 թվականից մեր դպրոցում լույս է տեսնում կրթա-լրատվական «Ջրուցակից» պարբերաթերթը, որի էջերում լուսաբանվում են դպրոցի առօրյան, ուսումնական կյանքի բարեփոխումները, ուսուցիչների մտորումներն ու աշակերտների ստեղծագործական առաջին թոթովանքը:

2009 թվականի հունիսի 2- ին մեր եւ Երեւանի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցները դարձան քույր դպրոցներ: Առաջիկայում նախատեսված են երկկողմ աջակցություններ և հանդիպումներ:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը և Համաշխարհային հայկական կոնգրեսը Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը, սփյուռքում հայ ինքնության պահպանմանը նպաստելու և «Լավագույն հայկական կրթօջախ» մրցույթին մասնակցելու համար դպրոցին և դպրոցի «Ջրուցակից» թերթին հանձնել է պատվոգրեր, իսկ «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» թիվ 131 դպրոցը նաև արժանացել է ՀՀ Հանրագիտարանի խմբագրության կողմից սահմանված մրցանակի, ստացել Դպրոցական մեծ հանրագիտարանի եռահատրյակ, ինչպես նաև շնորհակալագրեր եւ հուշանվեր:

Այս ամենի հետ մեկտեղ, ցավով պետք է նշել, որ վերջին տարիներին հետզհետե մեր աշակերտների թվաքանակը նվազում է՝ մեծ մտահոգություն պատճառելով դպրոցի հայ մանկավարժներին, աշակերտներին և ծնողներին: Մենք կանգնած ենք ևս մեկ կրթական օջախի փակման վտանգի առջև, որը մեզ սպառնում է հենց այն ծնողների ընտրության արդյունքում, ովքեր իրենց երեխաներին ռուսական բաժին են տանում՝ զրկելով մայրենի լեզվով ուսուցումից ու պատճառաբանելով, թե հայերեն կրթությամբ իրենց զավակների ապագան անհեռանկարային է: Կարծում են՝ այստեղ հայկական բաժին չէ, որ հեռանկարից զրկում է երեխային, այլ յուրաքանչյուր երեխայի ընդունակությունն ու շխատասիրությունն է կարևոր գործոնը նման հարցում:

Հայաստանի և Վրաստանի կրթության նախարարներն վերջերս կայացած հանդիպման ժամանակ երկու երկրների միջև համագործակցության հուշագիր են ստորագրել, որի համաձայն երկու երկրների բուհերը կխորացնեն կապերը, կիրականացնեն համատեղ նախագծեր: Հայկական դպրոցներում վերականգնվելու է հայոց լեզվի դասաժամերի քանակը, Հայաստանի եւ Վրաստանի քաղաքացի 10 ուսանողների ուսուցումը պետական բուհերում կֆինանսավորեն այդ երկու պետության նախարարությունները: Դարձյալ ուժի մեջ է Վրաստանում միասնական ազգային քննություններին միայն մեկ՝ մայրենի լեզվով ունակությունների քննությունը հանձնելու ազգային փորձամասնությունների ներկայացուցիչների բուհ ընդունվելու այն արտոնությունը, որ անցյալ տարվանից նախաձեռնել է Վրաստանի նախագահը: Ուստի տեղին է Վրաստանի ԿԳ փոխնախարար Նոդար Սուրգուլաձեի գարմանքը, թե այս ամենից հետո ինչու էլ միտի 100 հազարանոց թրքիստայ քաղաքի բոլոր հայ դպրոցներում աշակերտների թիվը միասին վերցրած՝ հինգ հարյուրի հազիվ հասնի... Կա՞ ավելի մեծ սխալ, քան այն, որ հայ ուսուցիչն իր երեխային տալիս է ռուսական բաժին, իսկ ինքն աշխատածամեր պահանջում հայկականում, կամ այն, որ հայագրի ուսուցիչն իր հայագրի աշակերտին ռուսերեն մայրենի է դասավանդում...

Այդ իսկ պատճառով, կոչ են անում մեր հայ ազգին՝ իրենց դպրոցահասակ զավակներին բերել հայկական դպրոց, որ ուրիշի այցում ծառ տնկելու, նրանց այգու մասին հոգալու փոխարեն թող իրենց այգու մասին հոգան, ո՛չ թե արմատախիլ անեն այն, ինչ իրենց հասել է նախնիներից ու մեղադրեն ուրիշներին...

Մանանա Կարապետյան

Թրիխիի թիվ 131 դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի, հոգաբարձուների խորհրդի անդամ



Հարութ Սասունյան, Ջեմալ փաշայի թոռն ասաց Ցեղասպանություն, իսկ Մորզենթաուի ծոռը՝ ոչ

2011-04-06

Այս մասին ավում է «Կալիֆորնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանի «Ջեմալ փաշայի թոռն ասաց Ցեղասպանություն, իսկ Մորզենթաուի ծոռը՝ ոչ» հոդվածում: Նրա խոսքերով, այդ երեկո ամենացնոցն այն չէր, թե ինչ ասաց Ջեմալը, այլ այն, թե ինչ չասաց մյուս բանախոսը՝ դոկտոր Պամելա Սթայները՝ դեսպան Շենրի Մորզենթաուի ծոռը:

«Milliyet» օրաթերթի սյունակագիր Ջեմալն անմիջապես շահեց թերահավատ լսարանի վստահությունը, ասելով. «Ես եկել եմ այստեղ իմ սիրտն ու միտքը ձեր առջև բացելու... Ես գիտեմ ձեր ցավը, Ցեղասպանության ձեր վիշտը, Մեծ եղեռնի ձեր վիշտը»: Անտեսելով Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը, որն արգելում է Հայոց ցեղասպանություն եզրն օգտագործել, նա իր ելույթի ընթացքում մի քանի անգամ խիզախորեն կրկնեց այդ խոսքերը: Նա միաժամանակ դատապարտեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ Թուրքիայի կառավարության ժխտողական քաղաքականությունը, այն անվանելով

«մեղավորություն ոճրագործության մեջ»:

Ջեմալը պատմեց 2008 թվականին Հայոց ցեղասպանության հուշահամալիր կատարած իր շատ հուզիչ այցելության մասին, որտեղ նա մեխակներ էր դրել իր մտերիմ ընկերոջ՝ լրագրող Հրանտ Դինքի հիշատակին, որին թուրք ծայրահեղականները սպանել էին Ստամբուլում: Երևան կատարած այցելության ժամանակ նա ցնցող մի հանդիպում էր ունեցել Արմեն Գևորգյանի հետ, այն վրիժառուի թոռան, որը 1922 թվականին սպանել էր նրա պապուն՝ Ջեմալ փաշային: Ջեմալը ներկայացրեց Թուրքիայում վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը,-ասվում է հոդվածում: Ինչպես գրում է Հարութ Սասունյանը, մինչ Ջեմալն իր անկեղծ ելույթով լավ տպավորություն թողեց լսարանի վրա, դոկտոր Սթայները հիասթափեցրեց ներկաներին՝ անդրդվելիորեն և միտումնավոր հրաժարվելով օգտագործել ցեղասպանություն բառը: Դրա փոխարեն նա կիրառեց թուրքական ժխտողական տերմինաբանությանը բնորոշ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ «ողբերգություն», «տառապանք» և «1915 թվականի իրադարձություններ»: Որպես Միջհամայնքային վստահության կերտման ծրագրի տնօրեն նա խոսեց «հայերի և թուրքերի միջև վստահության կերտման հնարավոր քայլերի» մասին: Նա ապշեցրեց լսարանին, խնդրելով որ հայերն ընդունեն, թե «թուրք ժողովուրդը սարսափելիորեն տուժել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ... կարիք ունի և արժանի է դրա ճանաչմանը»: Զբաղվարարվելով այս վրդովեցուցիչ խնդրանքով, նա շարունակեց, հորդորելով հայերին «մտածել թուրքական տառապանքների ճանաչման մասին, նախքան իրենց տառապանքների համար ճանաչում ստանալը»:

«Հարց ու պատասխանի ժամանակ, երբ ես մատնանշեցի այն զավեշտալի հակասությունը, երբ Ջեմալ փաշայի թոռը ազատորեն օգտագործում է Հայոց ցեղասպանություն եզրը, մինչդեռ դեսպան Մորզենթաուի ծոռը՝ ոչ, դրան հետևեց դոկտոր Սթայների ոչ համարժեք պատասխանը: Նա արդարացավ, ասելով, որ «միջնորդի» դեր է կատարում «հաշտեցման» ձգտելով հայերի և թուրքերի միջև:

«Բանավեճի վերջին մասնակիցը՝ պրոֆ. Հովհաննիսյանը Հասան Ջեմալին ասաց, որ հայկական մեծ լսարանը հավաքվել է նրան լսելու ոչ թե որպես թուրք լրագրողի, այլ որպես Ջեմալ փաշայի թոռան: Նա բացատրեց, որ թուրք ոճրագործների մտայնության ըմբռնումը չի կարող որևէ կերպ արդարացնել նրանց գործողությունները: Նա բոլորին նախագուշացրեց կանխամտածված ոչնչացման հետևանքով հայերի կրած

տառապանքները չհավասարեցնել թուրքերի՝ պատերազմից կրած տառապանքների հետ: Նա շեշտեց, որ հայերը ոչ միայն ճանաչում են պահանջում, այլ, որն ավելի կարևոր է՝ իրենց բռնագրավված ունեցվածքի վերականգնումը: Նա կոչ արեց Թուրքիայի կառավարությանը՝ Պոլստ Հայոց Պատրիարքարանին վերադարձնել Թուրքիայում գտնվող հարյուրավոր հայկական եկեղեցիները: Վերջում, որպես դոկտ. Սթյաներին ուղղված ակնարկ, պրոֆ. Հովհաննիսյանը շեշտեց, որ «հաշտեցումը» պահանջում է «զոջում արարքի համար»: Նրա ելույթն ընդունվեց հոտնկայա ծափահարություններով, գրում է Հարություն Սասունյանը:

«Այդ երկու Ջեմալի միակ տեղի խոսքը՝ Թուրքիայից հայկական հողերը վերադարձնելու պահանջատիրության մերժումն էր: Չնայած, զարմանալի չէ լսել մի թուրքի, անկախ այն բանից, թե որքան հանդուրժող է նա, որը պաշտպանում է իր երկրի ամբողջականությունը: Այնուամենայնիվ, նա հաստատեց, որ Թուրքիայի կառավարությունը պետք է ներողություն խնդրի հայերից և փոխհատուցում վճարի նրանց:

Մյուս կողմից, դոկտ. Սթյաներին, որպես ամերիկացի հրեայի և դեսպան Մորգենթաուի անմիջական ժառանգի, չի կարելի արդարացնել ցեղասպանության եզրը օգտագործելուց համառորեն հրաժարվելու համար, չնայած նրա բարի մտադրությունների ինքնախոստովանությանը: Չի կարելի չեզոք դիրք գրավել գոհի և դահիճի միջև: Նա պետք է ուշադրություն դարձնի Հոլոքոստը վերապրած և Նորբյան մրցանակի դափնեկիր Էլի Վիսելի հետևյալ խմաստուն խոսքերին. «Չեզոքությունը օգնում է կեղեքիչներին, բայց ոչ երբեք գոհին»: Եվ ինչպես կարող է նա հաշտեցնել երկու ժողովուրդների, առանց դահիճից հատուցում պահանջելու այն բանի համար, որ նրա նախապապն անվանել էր «Մի ազգի սպանող», գրում է Հարություն Սասունյանն իր հոդվածում:



**ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՆԱԽԱՂԵՂ Է ԹՈՒՐԿԻԱՅԻՆՄ 1915-1923 թթ. ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾՍՑԻՆ
ԿՈՏՈՐԱՍԵՆԸՆԸ ՈՐՊԵՏ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՐԱԿԵԼՈՒ ՀԱՍԱՐ
2011-04-06**

Այս օրը՝ 2011 թվականի ապրիլի 1-ն, ընդմիջո գրանցված կմնա մեր հիշողություններում, երկրի պատմության մեջ՝ ընդհանրապես, և հայ համայնքի համար՝ մասնավորապես, քանզի տեղական ժամանակով ժամը 13:30-ին Կոտորոք Պի Արդարադատության Պալատի ԿՏԻՊԻՆԱԿԵՍ՝ Ա՝ դահլիճում դատավոր Նորբերտ Օյարբիդեն հրապարակայնորեն հայտարարեց իր եզրակացության մասին, որին հանգել էր ավելի քան մեկ տասնամյակ տևած դատական մանրակրկիտ, բազմակողմանի հետաքննությունից հետո:

20-րդ դարի վերջին, իրավաբան Գրեգորիո Հայրապետեանն ու նրա ընտանիքը՝ Արգենտինայի արդարադատության առջև հայց էին հարուցել ընդդեմ Թուրքիայի կառավարության, պահանջելով հայտնել, թե ինչ է պատահել իրենց նախնիներին, որոնք դարասկզբին բռնի տեղահանվել են իրենց պապեական հողից, արտրվել ու այլևս ոչինչ նրանց մասին հայտնի չի:

Հշմարտության իրավունքի վրա հիմնված դատական գործը ստանձնել էր դատավոր Օյարբիդեն և սկսեց հետաքննությունը՝ խնդրագիր ներկայացնելով ավելի քան 20 պետությունների՝ խնդրո առարկա ժամանակահատվածին վերաբերող այն արխիվներն ու փաստաթղթերը ուղարկելու մասին, որ կարող էին նպաստել կատարվածի վերաբերյալ Հշմարտության բացահայտմանը:

Եղան պետություններ, որ մերժեցին համագործակցել, եղան պետություններ, որոնք հայ ժողովրդի ապրածը Ցեղասպանություն որակել չկամենալով, այնուամենայնիվ, բաց արեցին իրենց արխիվները և թույլ տվեցին, որ շատ՝ մինչ այժմ անհայտ փաստաթղթեր, դատական գործի մաս կազմեն՝ դառնալով վերջնական եզրակացության հիմնական հենակետերից մեկը:

Արգենտինայում, դատավորը հնարավորություն է ունեցել լսելու կոտորածներից փրկված տասնյակից ավելի անձանց պատմությունները՝ այն տարիներին կրած տառապանքների մասին:

Այսպիսով, արժե նշել, որ երկրիս հայ համայնքի կարևորագույն հաստատությունները միացան Լուիզա Հայրապետեան հաստատության քային՝ մասն դառնալով հայցվոր կողմին:

Տարիներ անցան, սակայն հավաքված ապացույցները դեռ բավարար չէին, որպեսզի դատավորը տար իր վերջնական կարծիքը: Փաստաթղթերի առաքման, դրանց թարգմանությունների և խսկությունների հաստատման համար պահանջվող ժամանակը թերևս ուշացման հիմնական պատճառն էին:

Սակայն վերջապես հասավ այդքան սպասված օրը:

Եւ մեր համայնքը, նախաձեռնությամբ մի ընտանիքի, որ սերտորեն կապված է հանուն արդարության ու Մարդու Իրավունքների լիարժեքության, հանուն նոր՝ առանց շահագործողների ու շահագործվողների հասարակարգի պայքարին, մասն դարձավ պատմական մի իրադրության, որ մեր վաղեմի պայքարի պատմության մեջ կնշանավորվի որպես նախքան-ը և հետո-ն առանձնացնող կարևորագույն կետ:

Երբ ժամը 13:30-ին դատավոր Օյարբիդեն մտավ Արդարադատության պալատի Ա՝ սրահը, այն արդեն ամբողջապես զբաղված էր Լուզա Հայրապետեան հաստատության անդամներով, տեղիս հայ համայնքի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներով, լրագրողներով ու մեկնաբաններով, օրինապահ տղամարդկանցով ու կանանցով, Մարդու Իրավունքների պաշտպաններով:

Իշխող լռությունն այլ բան չէր, տարիներ շարունակ թաքնված ցավի, վշտի ու տառապանքի և տասնամյակների անկոտրում պայքարի մի խառնուրդ:

Դատավորը կարդաց շարադրվածքի էական պարբերությունները: Մի քանի անգամ դադարեցրեց ելույթը՝ հաղթահարելու համար հույզերը, որ դուրս էին հորդում փաստաթղթում թվարկված՝ հայ ժողովրդի կրած տառապանքների նկարագրություններն ընթերցելիս:

Դատավորն ակնհայտորեն հուզված էր, մեջբերելով Եղեռնը վերապրողներից մեկի խոսքերը, որ այն եղեռնական օրերին ընդամենը 3 տարեկան էր. Այս հայցը որևէ նյութական պահանջ չի ներկայացնում, այլ միայն հնարավորություն՝ ասելու մեր պապերին ու ծնողներին, որ 95 տարի հետո մենք չենք մոռացել նրանց ու շարունակում ենք պայքարել մինչև հասնենք արդարության:

Ժամը 14:05-ին դատավոր Նորբերտ Օյարբիդեն հայտարարեց.

Ռոտշում եմ.

1. Հիմնվելով ներկա՝ հայցվոր Գրեգորիո Հայրապետեանի հարուցած No 2.610/2001 դատական գործի հետքնության արդյունքների, վերը նշված պայմանների ու դրանց նպատակների ուսումնասիրության վրա, ՀԱՅՏԱՐԱՐԵԼ, որ թուրքիա պետությունը 1915 -1923 թթ. Ցեղասպանության ժամանակահատվածում Հայ ժողովրդի դեմ:

Դատավոր Օյարբիդեն հերթականորեն ներկայացրեց բանաձևի մնացած կետերը, սակայն ներկաները, որոնց աչքերը լցված էին, չէին կարողանում զսպել իրենց հոգիներից դուրս ժայթքող կրակը:

Պայթեցին բուն ծափահարություններն ու դրանց հետևեցին ներկաների հուզված գրկախառնությունները՝ Հայրապետեան ընտանիքի, ի դեմս իրավաբան Գրեգորիո Հայրապետեանի, նրա դուստր Բեատրիսի և թոռան՝ Ֆրեդերիկի, և հայ համայնքի տարբեր կազմակերպությունների ու նրանց լրատվական միջոցների ներկայացուցիչների միջև:

Մի Արգենտինայում, որտեղ մտանանշվեց, որ անցյալի ողբերգությունների հարցի փակման միակ ճանապարհը արդարության հաստատումն է, մեղավորներին պատժելը, այս դատավճիռը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մարդու Իրավունքների բնագավառում՝ երկրի հեղինակությունը բարձրացնող և մեկ քայլ:

Եւ մենք, ծագումով հայ արգենտինացիներս, կարողացել ենք ավագի մեր համեստ հատիկն ավելացնել անարդարության ու անպատժելիության դեմ՝ մեր ժողովրդի մշտական պայքարին:

ԱՐԳԵՆՏԻՆԱՅՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Վերատպություններ



ՓՐԿԵԼ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆԸ՝ ՄԵԼԳՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԼՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

2011-04-04

Մելգոնյան կրթական հաստատության կենսագրության սկիզբը 1921թ. է, երբ Կարապետ Մելգոնյանը կտակ է կազմում եւ իր ունեցվածքը նվիրաբերում Պոլսո հայոց պատրիարքին՝ պայմանով, որ նա այդ գումարով դպրոց կառուցի: 1925 թ. կնքվում է գործարք, որով Պոլսո հայոց պատրիարք Ջավեն Եղիայանը ՀԲԸՄ-ին է փոխանցում դպրոցի տնօրինության հետ կապված բոլոր արտոնությունները: Համաձայն այդ պայմանագրի՝ ՀԲԸՄ-ի տնօրինության տակ են անցնում հաստատության շարժական ու անշարժ գույքը, սակայն պայմանով, որ ՀԲԸՄ-ն պարտավոր է պահպանել հաստատությունը:

1926-ին նույն համաձայնագրում կատարվում են լրացումներ, եւ ՀԲԸՄ-ն ազատվում է բոլոր սահմանափակումներից եւ դառնում Մելգոնյան վարժարանի լիիրավ սեփականատեր: Հաստատությունն իր դռները բացում է 1926-ին ու իր գործունեությունը շարունակում է մի քանի տասնամյակ:

2004 թ. մարտի 14-ին ՀԲԸՄ վարչությունը միաձայն որոշում է կայացնում փակել

հաստատությունը: Դպրոցի փակման առնչությամբ դատավարություններ են կայացել Կիպրոսում եւ ԱՄՆ-ում, սակայն երկու պետությունների դատարանները հարցը որոշել են հօգուտ ՀԲԸՄ-ի: Հետեւաբար իրավական ճանապարհով անհնար է պայքարել դպրոցի բացման համար:

Կիպրոսի կառավարությունը հաստատության գույքի մի մասն արգելադրել է: Դպրոցն ընդգրկված է պետական հուշարձանների ցանկում: Արգելվում է քանդել շենքը եւ կառավարության որոշմամբ կարող է օգտագործվել միայն որպես կրթական կամ մշակութային հաստատություն: Սարսափելի վիճակում է դպրոցի գրադարանը:

«Մելգոնյան դպրոցի վերածնունդ» նախաձեռնող խումբն ավելի քան մեկ տարի գործունեություն է իրականացնում Մելգոնյանի հիմքի վրա հայկական դպրոց կառուցելու համար:

Նախաձեռնող խմբի անդամներից տեր Մեսրոպ քահանա Արամյանը փաստում է, որ տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ Կիպրոսի կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Տեղի են ունեցել հանրային լուսամբեր՝ կրթության ոլորտի մասնագետների ու գործարարների մասնակցությամբ: Տեր հոր ներկայացմամբ՝ բազմիցս դիմել են ՀԲԸՄ-ի ղեկավարությանը, առաջարկությամբ վարձակալել շինությունը եւ ստեղծել 21-րդ դարի չափանիշերին համապատասխանող դպրոց, սակայն ՀԲԸՄ-ն որեւէ պատասխան չի տվել:

Արամյանի ներկայացմամբ՝ եթե ՀԲԸՄ-ն շարունակի լուր քաղաքականություն իրականացնել, ապա նախաձեռնող խմբի անդամները կշարունակեն Կիպրոսում հայկական դպրոց կառուցելուն ուղղված ջանքերը: Նրանք մտադիր են Նիկոսիայում Մելգոնյանի հիմքի վրա նոր դպրոց կառուցել: Մշակվել է ծրագիրը, որը, ըստ Գործարարների միության նախագահ Արսեն Դազարյանի, շատ լավ է եւ աշխատող: «Ներդրումային ծրագիրը բազմաթիվ գործարարների հավանության արժանացավ եւ օր առօր պետք է կյանքի կոչվի», Մելգոնյան կրթական հաստատության «Փառավոր անցյալ, անորոշ ներկա» խորագրով պատմա-իրավաբանական ուսումնասիրության ներկայացման ժամանակ «Ազգ»-ի հետ զրույցում ասաց Արսեն Դազարյանը: Տեր Մեսրոպ քահանա Արամյանն էլ փաստեց, որ կա մարդկանց մի խումբ, որ պատրաստ է ներդրումներ կատարել:

Նա հավելում է, որ ԵՄ-ն արեւմտահայերեն անհետացող լեզուների շարքում է դասել եւ անհետացող լեզուները պաշտպանելու քաղաքականություն մշակել: Այսօր արեւմտահայերենի պաշտպանության խնդիր կա, Կիպրոսն էլ, որպես ԵՄ անդամ պատրաստ է արեւմտահայերենի պաշտպանության ծրագիր իրականացնել:

«Կիպրոսում այսօր չկա արեւմտահայերենով ուսուցանվող ավագ դպրոց, եւ երկիրը ողջունում է այդ բացը լրացնելու նախաձեռնությունները: Հետեւաբար, Մելգոնյան նոր դպրոցը հրաշալի օրինակ կարող է հանդիսանալ»:

Իրավական ճանապարհով հարցի լուծման բանալին անհնար է գտնել, հետեւաբար պետք է որոշման վրա ազդել հասարակական կարծիքի

օգնությամբ: Արամյանն ասաց, որ նախատեսվում են նմանատիպ լուումներ անցկացնել հասարակական տարբեր շերտերի մասնակցությամբ եւ հիմք դնել հայկական դպրոցի մրցունակության համար: Այս տարի լրանում է դպրոցի հիմնադրման 85-ամյա հոբելյանը: Մեղգոնյանի տարբեր տարիների շրջանավարտները մայիսին Հայաստանում կկազմակերպեն տոնական միջոցառում:

ՀՄՄՄԻՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ազգ» օրաթերթ